ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ամեն տարի Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս զոհվում կամ հաշմանդամ են դառնում երիտասարդ տղաներ: Ամեն տարի հայ ընտանիքները կորցնում են իրենց զավակներին, կանայք կորցնում են իրենց ամուսիններին և երեխաներ մնում են առանց հոր խնամքի: Այդ երիտասարդ տղաները կատարում են մեծագույն զոհողությունը՝ Հայաստանի անվտանգությունն ապահովելու համար:

Հայ ժողովուրդը միավորել է իր ուժերը, որպեսզի օգնի որդեկորույս ընտանիքներին և աջակցի հայրենիքը պաշտպանելիս վիրավորված քաջ տղաների ապաքինմանը: Այս նպատակով 2016թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքը:

Օրենքի ուժով ՀՀ-ում աշխատանքային պայմանագրով աշխատող յուրաքանչյուր անձ ամսական 1 000 դրամ իր աշխատավարձից տրամադրում է զինվորների և զինվորականների ընտանիքների ֆինանսական աջակցությանը: Հավաքագրված գումարներն այնուհետև տրամադրվում են զոհված կամ անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին կամ հաշմանդամ զինծառայողներին:

Օրենքի 27-րդ հոդվածով սահմանվեց, որ ՀՀ կենտրոնական բանկը պետք է ստեղծի հատուկ հիմնադրամ, որը պատասխանատու կլինի միջոցների անկախ հավաքագրման, կառավարման և տրամադրման համար: Այդ հոդվածի հիման վրա 2017թ.-ի հունվարի 16-ին ստեղծվեց «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը» (այսուհետ՝ Հիմնադրամ):

Զինծառայողների Ապահովագրության հիմնադրամ

«Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը» յուրահատուկ կառուցվածք ունի, քանի որ այն ներառում է ինչպես ապահովագրական ընկերության, այնպես էլ հասարակական կազմակերպության տարրեր: Հիմնադրամը ՀՀ և ԱՀ հարկատուներից ստանում է ամսական 1000-ական դրամ և դրանք վերաներդնում է, որպեսզի ստանա հավելյալ եկամուտ: Սակայն ի տարբերություն ապահովագրական ընկերությունների՝ ստացված բոլոր եկամուտները հիմնադրամն ուղղում է իր նպատակների իրականացմանը, այն է՝ հատուցումների տրամադրմանը: Հիմնադրամի առանձնահատկություններից է նաև այն, որ հավաքագրվող միջոցները տարանջատված են պետական բյուջեից՝ երաշխավորելով, որ հավաքագրվող միջոցները երբևէ չեն օգտագործվի այլ նպատակով, քան զինծառայողներին հատուցում տրամադրելն է: Քանի որ Հիմնադրամը ֆինանսավորվում է ժողովրդի կողմից ժողովրդի համար, քաղաքական բեմի փոփոխությունները ազդեցություն չեն կարող ունենալ Հիմնադրամի ֆինանսական կայունության և անկախության վրա:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն օրենքով ընտրվեց ստեղծելու և կառավարելու Հիմնադրամը՝ հաշվի առնելով Սահմանադրությամբ երաշխավորված իր անկախությունը և միջոցների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ֆինանսական գիտելիքները:

Հիմնադրամի ստեղծումը խրթին առաջադրանք էր, որն իրականացնելու համար պահանջվեցին Պաշտպանության նախարարության, Կենտրոնական բանկի և Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համատեղ ջանքերը: Վերջիններիս մասնագիտական գիտելիքներն անհրաժեշտ էին՝ հաշվի առնելով Հիմնադրամի պարտականությունների ծավալը, այն է՝ հատուցումների տրամադրմանն ուղղված մի շարք ընթացակարգերի կազմակերպումը, իրագործումը և վերահսկողությունը:



Ինչպե՞ս է գործում հիմնադրամը



Փուլ I

Հիմնադրամի միջոցների մեծ մասն են կազմում հավաքագրվող ամսական պարտադիր վճարները: Պարտադիր ամսական վճար կամ այլ կերպ՝ դրոշմանիշային վճար, վճարում եմ ՀՀ տարածքում աշխատանքային պայմանագրով աշխատող բոլոր անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը և նոտարները: Դրոշմանիշային վճարը կազմում է ամսական 1000 դրամ: 2017թ. հունվարից առ այսօր Հիմնադրամը յուրաքանչյուր ամիս հավաքագրել է միջինը 400մլն ՀՀ դրամ:

Հավաքագրման փուլում Հիմնադրամը համագործակցում է հարկային մարմինների հետ, քանի որ վերջիններս պատասխանատու են հարկերի հավաքագրման և դրանք Հիմնադրամին փոխանցելու համար: Որպեսզի ապահովվի գումարների հավաքագրման թափանցիկությունը, Հիմնադրամը կառուցել է տեղեկատվության փոխանակման համակարգ, որի միջոցով հարկային մարմինները Հիմնադրամին փոխանցում են տեղեկատվություն հավաքագրված գումարների, ինչպես նաև յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ: Թափանցիկության նկատառումներով Հիմնադրամը այս տեղեկատվությունը հասանելի է դարձրել նաև հասարակությանը: Մասնավորապես՝ յուրաքանչյուր հարկատու, այցելելով հիմնադրամի կայքէջ, կարող է ստուգել՝ արդյոք հիմնադրամը ստացել է իր կողմից վճարված դրոշմանիշային վճարը: Ստուգումն իրականացնելու համար բավարար է մուտքագրել ՀԾՀ-ն (սոցիալական քարտի համարը) կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն: Այս գործիքը յուրաքանչյուր հարկատուի հնարավորություն է տալիս արդյունավետորեն վերահսկելու իր վճարած դրոշմանիշային վճարի փոխանցումը Հիմնադրամին: Այն նաև հնարավոր է դարձնում վճարված և Հիմնադրամի կողմից ստացված գումարի չափի անհամապատասխանությունները Հիմնադրամին հաղորդելը և անհրաժեշտության դեպքում դրանց պատճառները պարզելը:

Նվիրաբերություններ

Գումարների հավաքագրման երկրորդ միջոցը նվիրաբերություններն են: Հիմնադրամը փորձել է նվիրաբերությունների իրականացումը դարձնել հնարավորինս հեշտ և մատչելի:
Նվիրաբերել հնարավոր է՝ այցելելով Հիմնադրամի կայքէջ՝ www.1000plus.am: Նվիրաբերողը ուղղակի պետք է ընտրի նվիրաբերության չափը, տրամադրի իր անուն-ազգանունը, էլ. հասցեն և մուտքագրի իր բանկային քարտի տվյալները: Գործարքն իրականացվում է 3D ապահով պորտալի միջոցով, որը սպասարկվում է «ԿոնվերսԲանկ» ՓԲԸ-ի կողմից՝ անվճար: Նվիրաբերողը հնարավորություն ունի նաև ընտրելու ամենամսյա վճարումների տարբերակը, որի դեպքում նախընտրած նվիրաբերության չափը յուրաքանչյուր ամիս ավտոմատ կգանձվի նվիրաբերողի տրամադրած բանկային քարտից:
Կայքի միջոցով հնարավոր է կատարել նվիրաբերություն նաև Paypal համակարգի միջոցով:
Նվիրաբերություն իրականացնելու հետ մեկտեղ նվիրաբերողը կարող է ուղերձ գրել և իր նվիրաբերություն կատարելու մասին կիսվել սոցիալական ցանցերով: Նվիրաբերություններ կարող են իրականացվել ՀՀ դրամով, դոլարով, եվրոյով և ռուսական ռուբլով:

Հնարավոր է նաև նվիրաբերել՝ կատարելով փոխանցում Հիմնադրամի բանկային հաշվին: Հիմնադրամի բանկային հաշիվների տվյալները, ինչպես նաև փոխանցման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը ներառված են այս գրքույկի վերջին էջերում:

Գիտակցելով, որ թափանցիկությունը նվիրաբերությունների հավաքագրման և վստահության գրավականն է՝ Հիմնադրամը հրապարակում է ստացված բոլոր նվիրաբերությունների ցանկը: Նվիրաբերությունների էջում կարող եք գտնել նվիրաբերողների անունները, նվիրաբերությունների ստացման ամսաթվերը և նվիրաբերված գումարը: Կայքը հնարավորություն է տալիս նաև կատարելու ոչ հրապարակային կամ «անանուն» նվիրաբերություն, որի դեպքում նվիրաբերողը, այնուամենայնիվ, տրամադրում է իր մասին տեղեկատվություն նվիրաբերություն կատարելիս, սակայն նվիրաբերությունների ցանկում իր նվիրաբերությունը նշվում է որպես «անանուն» : Նվիրաբերությունների էջը երաշխավորում է, որ ստացված որևէ լումա դուրս չի մնա հասարակության վերահսկողությունից:
Հիմնադրամը նաև հրապարակում է խոշոր նվիրաբերողների ցանկ, որը ներառում է 500 000 դրամ և ավելի կամ ամսական նվիրաբերություններ կատարած անձանց և կազմակերպությունների ցանկը:

Հիմնադրամի ստեղծման առաջին երկու տարիների ընթացքում նվիրաբերությունների միջոցով հավաքվել է 197մլն ՀՀ դրամ (մոտ $411 000): Նվիրաբերությունները ստացվել են ավելի քան 21 պետություններից: Առավելագույն նվիրաբերությունները կատարվել են հետևյալ երեք երկրներից.
1. Հայաստան
2. Ֆրանսիա
3. Կիպրոս

Փուլ II

Օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ Հիմնադրամի ծրագրերի իրագործման համար եկամուտ ստանալու նպատակով Հիմնադրամի հավաքագրված գումարները պետք է կառավարվեն: Օրենքի համաձայն՝ գումարները կարող են կառավարվել անմիջապես Հիմնադրամի կամ Հիմնադրամի խորհրդի կողմից նշանակված կազմակերպության միջոցով:



2017թ. մարտի 3-ին՝ իր առաջին նիստի ժամանակ, Հիմնադրամի խորհուրդն ընտրեց Գործադիր Հանձնաժողով, որը կազմված էր Կենտրոնական բանկի աշխատակիցներից, որոնց վստահվեց հավաքագրված միջոցների կառավարումը: Գործադիր հանձնաժողովն ունի 7 անդամ, իսկ գործադիր հանձնաժողովի նախագահը ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանն է: Հանձնաժողովի անդամների կազմում են ֆոնդի կառավարիչներ, ռիսկերի կառավարիչներ, իրավաբաններ և ակտուարներ:

Գործադիր հանձնաժողովը միջոցները կառավարում է օրենքի և միջոցների կառավարման լավագույն միջազգային փորձի համաձայն, որոնք պարունակում են այն ակտիվների ցանկը, որոնցում կարող են ներդրվել Հիմնադրամի միջոցները: Գործադիր հանձնաժողովի ներդրումային քաղաքականությունը մանրամասն արտացոլված է Ներդրումային քաղաքականության ծրագրում, որը Գործադիր հանձնաժողովը ներկայացնում է հիմնադրամի խորհրդի հաստատմանը:

Հիմնադրամի նպատակն է հավաքագրված միջոցների պահպանումը: Այդ իսկ պատճառով ներդրումներ իրականացնելիս Գործադիր հանձնաժողովը պահպանողական մոտեցում է ցուցաբերում: Մասնավորապես՝ Հանձնաժողովը ներդրումներ է իրականացնում կարճաժամկետ և ցածր ռիսկային ակտիվներում, ինչպիսիք են օրինակ՝ պետական պարտատոմսերը: Բարձր իրացվելիությունը և եկամտաբերությունը թույլատրում են Հիմնադրամին իրականացնել իր պարտականությունները՝ միաժամանակ ապահովելով Հիմնադրամի համար որոշակի եկամուտ:

Հիմնադրամը նաև հիմնված է հաշվետվողականության սկզբունքի վրա, որի շնորհիվ Գործադիր հանձնաժողովը հաշվետվողական է հանրությանը: Գործադիր հանձնաժողովը հրապարակում է տարեկան հաշվետվություններ, որոնք մանրամասն ներկայացնում են այդ տարվա եկամուտները կամ կորուստները:

Փուլ III

Հատուցումների տրամադրում

Այս փուլը սկսվում է, երբ մարտական գործողությունների հետևանքով.
- զինվորը ստանում է վնասվածք, որը բերում է հաշմանդամության կամ
- զինվորը հայտարարվում է անհայտ կորած կամ
- զինվորը զոհվում է:

Թվարկված յուրաքանչյուր դեպքում զինծառայողը կամ վերջինիս ընտանիքը ստանում է հատուցում՝ հետևյալ չափերի.

Աստիճան	Զոհված/անհայտ բացակայող/ I խմբի հաշմանդամ			II խմբի հաշմանդամ		
	Միանվագ	Ամսական	Ընդհանուր	Միանվագ	Ամսական	Ընդհանուր
Սպա	$20,000	$600	$169,500	$10,000	$400	$110,000
Ենթասպայական կամ շարքային կազմի զինծառայող	$20,000	$500	$145,000	$10,000	$300	$85,000
Տարածքային պաշտպանությանը ներգրավված անձ	$20,000	$500	$145,000	$10,000	$300	$85,000
Կրտսեր ենթասպա	$20,000	$400	$120,000	$10,000	$200	$60,000
Շարքային զինծառայող	$20,000	$400	$120,000	$10,000	$200	$60,000

* Հատուցման չափերը կարող են ավելացվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով
** Հատուցումները նախատեսված են, տրամադրվում և հաշվարկվում են ՀՀ դրամով, ներկայացված դոլարային արժեքները ինդիկատիվ են:

Հատուցման չափերը որոշելիս առաջնային նպատակն այն էր, որ զինվորների ընտանիքները, ինչպես նաև հաշմանդամ զինվորները վստահ լինեին, որ ունեն եկամտի կայուն աղբյուր: Մահվան, անհայտ կորելու կամ հաշմանդամության դեպքում հատուցման չափից 10մլն ՀՀ դրամը (մոտ $20,000) տրամադրվում է միանվագ, իսկ մնացածը՝ ամենամսյա հավասար վճարումներով 20 տարի շարունակ: II խմբի հաշմանդամության դեպքում հատուցման չափից 5մլն ՀՀ դրամը (մոտ $10,000) տրամադրվում է միանվագ, իսկ մնացածը՝ ամսական հավասար վճարումներով:

Օրենքի համաձայն՝ Հիմնադրամը տրամադրում է հատուցում միայն այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել սկսած 2017թ. հունվարի 1-ից: Սակայն, եթե Հիմնադրամը հավաքագրի բավարար միջոցներ և/կամ նվազեն հատուցման դեպքերը, Հիմնադրամի խորհուրդը օրենքի համաձայն կարող է որոշում կայացնել 2017թ. հունվարի 1-ից առաջ տեղի ունեցած դեպքերը հակառակ ժամանակագրական հերթականությամբ հատուցելու մասին:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կայացրել է որոշում հատուցումներ տրամադրել 2017թ.-ից առաջ տեղի ունեցած դեպքերի մասով

Որոշումը կայացնելի հաշվի են առնվել Հիմնադրամի ֆինանսական միջոցները, որոնց հիման վրա կատարվել են մի շարք ակտուարական հաշվարկներ:

Որոշումների համաձայն.

- հատուցումներ են տրամադրվում 2008-2016թթ.-ին տեղի ունեցած դեպքերի
- տվյալ հատուցումները համարվում են Հիմնադրամի կողմից Օրենքով սահմանված հատուցումներից բացառություններ, որոնց տրամադրման ընթացակարգն ու պայմանները կարգավորվում են համապատասխան որոշումներով
- որոշումների համաձայն 2008-2016թթ.-ին տեղի ունեցած դեպքերի մասով չեն տրամադրվում միանվագ հատուցումներ:
- հատուցումները տրամադրվում են 20 տարվա կտրվածքով:
- հատուցման չափը հավասար է Օրենքով սահմանված հատուցման գումարի և զինծառայողին կամ վերջինիս ընտանիքին տրամադրվող պետական կենսաթոշակի գումարի դրական տարբերությանը: *Օրինակ, եթե զոհված սպայի ընտանիքը պետությունից ստանում է 60,000 ՀՀ դրամ, ապա Հիմնադրամից կստանա ամսական 240,000 ՀՀ դրամ (300,000 ՀՀ դրամ – 60,000 ՀՀ դրամ):

Պաշտպանության նախարարությունն իրականացնում է հետաքննություն, որպեսզի պարզի՝ արդյոք մահը, հաշմանդամությունը կամ կորուստը վրա է հասել մարտական գործողությունների արդյունքում: Եթե այո՝ ապա հատուցում տրամադրելու մասին շահառուներից գրավոր դիմում ստանալուց հետո Պաշտպանության նախարարությունը ուղարկում է գործը Հիմնադրամին:

Գործը Պաշտպանության նախարարությունից ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում, Հիմնադրամի Ակտիվների և Պարտավորությունների հանձնաժողովը հրավիրում է նիստ, վերանայում է ստացված գործը և կայացնում է որոշում՝ հատուցում տրամադրելու մասին: Այնուհետև, Հիմնադրամը բացում է հատուկ բանկային հաշիվ յուրաքանչյուր շահառուի անունով (այսուհետ՝«Հատուցման հաշիվ»): Հատուցման հաշվին փոխանցում միանվագ վճարումը և առաջին ամսվա հատուցումը: Եթե շահառուները մեկից ավելի են, ապա հատուցումը հավասարապես բաժանվում է շահառուների միջև, բացառությամբ, եթե շահառուներից մեկը գրավոր թույլատրել է իրեն հասանելիք հատուցումը տրամադրել մյուս շահառուին: Հատուցման հաշիվները բացվում են Հիմնադրամի 3 գործընկեր բանկերից մեկում՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում և «Արցախբանկ» ՓԲԸ-ում:

Այս բանկերի հետ կնքված պայմանագրերի համաձայն՝ հաշիվները բացվում և հետագայում սպասարկվում էն անվճար: Գործընկեր բանկերը նաև հանձն են առել վճարել ՀՀ ԿԲ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքին հավասար (2016-2017թթ.՝ 6%) տոկոսագումարներ հատուկ հաշիվներում առկա մնացորդի նկատմամբ:
Որպեսզի տրամադրված հատուցումները ծառայեն իրենց նպատակին, այն է՝ զինվորի և նրա ընտանիքի ֆինանսական ապահովությանը, Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանվեց, որ հատուցման հաշիվները հատուկ բանկային հաշիվներ են: Հատուկ բանկային հաշիվները, համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, չեն կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց կամ հաճախորդի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց: Այս դրույթը թույլ չի տալիս, որ զինվորական ընտանիքներին տրամադրվող հատուցումները բռնությամբ օգտագործվեն երրորդ անձանց նկատմամբ ունեցած պարտականություններն իրականացնելու համար:
Կայքի առաջին էջում երևում է տրամադրված հատուցումների չափը: Կայքը նաև ներկայացնում է հատուցում ստացած բոլոր զինվորների անունները, նրանց կյանքի մասին որոշակի տեղեկատվությամբ (ընտանիքի թույլտվության դեպքում):

Հոգաբարձուների Խորհուրդը

Հիմնադրամի որոշումներ կայացնող գլխավոր մարմինը Հոգաբարձուների Խորհուրդն է:

Խորհուրդը՝

• հաստատում է հիմնադրամի բյուջեն, ինչպես նաև հիմնադրամի ծախսերի տարեկան թույլատրելի սահմանաչափը,

• սահմանում է շահառուներին հատուցման գումարներ վճարելու կարգը,

• նշանակում է հիմնադրամի գործադիր հանձնաժողովի անդամներին, հիմնադրամի տնօրենին, ընտրում է հիմնադրամի արտաքին աուդիտին,

• հաստատում է հանձնաժողովի ձևավորման, գործունեության և լուծարման կարգերը,

• հաստատում է հիմնադրամի կողմից եռամսյակային հաշվետվությունները և այլն:

Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) կազմված է ինն անդամներից, ովքեր նշանակվում են 5 տարի ժամկետով և Խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

Խորհրդի անդամները նշանակվում են՝

1) երեքը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

2) երեքը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից.

3) երեքը՝ զինծառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից:

Խորհրդի նախագահին իրենց կազմից ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ հինգ տարի ժամկետով:

Ներկայումս Խորհրդի նախագահն է Վիգեն Սարգսյանը՝ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարը, որն անմիջականորեն ներգրավված է հիմնադրամի գործունեության մեջ: Թաֆթս և Հարվարդի համալսարանների իրավունքի և դիվանագիտության Ֆլետչեր դպրոցի շրջանավարտ պարոն Սարգսյանը պատվավոր զինվոր և փորձված քաղաքական գործիչ է: Նա առաջնորդել է այս հիմնային ռեֆորմի իրականացումը և համապատասխան օրենքի ընդունումը:

Խորհրդի անդամներն են նաև

• Կարեն Թամազյանը, Ֆինանսների փոխնախարար

• Տիգրան Ուրիխանյանը, Ազգային Ժողովի պատգամավոր, «Ծառուկյան» դաշինքի անդամ

• Արթուր Նախշիկյանը, Սևծովյան առևտրի և զարգացման բանկի Կառավարման կոմիտեի գլխավոր խորհրդական

• Իրինա Սեյլանյանը, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Մալթա» ընկերության Ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտի տնօրեն և գանձապետ , «Էյչ-Էս-Բի-Սի Գլոբալ Ասեթ Մենեջմենթ Մալտա» ընկերության խորհրդի անդամ

• Տիգրան Դավթյանը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Տնտեսության և ֆինանսական քաղաքականության վարչության պետ

• Արամ Մեհրաբյանը, «Արար» հիմնադրամի ղեկավար

• Մեսրոպ Մանուկյանը, ներկայացնում է Երկրապահ ուժերը

• Մարգարիտա Խաչատրյանը, «Զինվոր» համակարգող խորհրդի իրավաբանական անձանց միության ղեկավար

Տնօրենը

Տնօրենը պատասխանատու է Հիմնադրամի գործունեության համար և նշանակվում է Խորհրդի կողմից:
2017 թվականի մարտի 2-ին Խորհուրդը Հիմնադրամի տնօրեն նշանակեց Հարվարդի համալսարանի Քենեդու անվան կառավարման դպրոցի շրջանավարտ Վարուժան Ավետիքյանին: Պարոն Ավետիքյանը նաև ՀՀ կենտրոնական բանկի գլխավոր իրավախորհրդատուն է և կանգնած է բարեփոխման հիմքում: Տնօրենը ղեկավարում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը և ապահովում է վերջինիս հետագա աճը և զարգացումը:

Թիմը

Հիմնադրամի գործունեությունն ապահովում է երիտասարդ կամավորականների խումբ՝ հիմնադրամի տնօրենի ղեկավարությամբ: Կամավորականներն ընտրվել են Կենտրոնական բանկի աշխատակիցներից: Խմբի անդամներին ծանոթանալու համար կարող եք այցելել Հիմնադրամի կայքէջ:
Խումբը պատասխանատու է Պաշտպանության նախարարությունից գործերի ստացման, հանձնաժողովների նիստերի կազմակերպման, հոգաբարձուների խորհրդի նիստերի կազմակերպման, հատուցման հաշիվների բացման, հատուցումների ժամանակին տրամադրման, հիմնադրամի կայքի սպասարկման՝ այդ թվում թերությունների վերացման, տեղեկատվության հավաքագրման, ուսումնասիրման և կայքում արտացոլման համար, ինչպես նաև հիմնադրամի գործունեության մասին հասարակությանը իրազեկելու համար:
Քանի որ հիմնադրամի կայքը իր թափանցիկության մեծագույն երաշխիքն է, ծրագրավորողների և տվյալների մասնագետների մի մեծ թիմ աշխատում է պարզ, հասկանալի և տեղեկատվական կայք ստեղծելու համար:

Հիմնադրամի գործունեության մեջ կարևոր դեր ունի նաև Ակտիվների և Պարտավորությունների Հանձնաժողովը, որը ստեղծվել է Խորհրդի կողմից՝ ապահովելու համար, որ Հիմնադրամի ակտիվները միշտ համաչափ լինեն իր պարտավորություններին: Հանձնաժողովը նաև օժանդակում է գործադիր հանձնաժողովին՝ տրամադրելով տեղեկատվություն, ինչպես նաև կանխատեսումներ հիմնադրամի պարտավորությունների մասին:

Թափանցիկություն և հաշվետվողականություն

Կայքը (www.1000plus.am) Հիմնադրամի թափանցիկության գլխավոր երաշխիքն է: Հիմնադրամը մեծ ջանքեր է գործադրել՝ ապահովելու համար Հիմնադրամի գործունեության բոլոր մանրամասների արտացոլումը կայքում:

Հիմնադրամի կայքի գլխավոր էջում առկա են երկու հաշվիչներ, որոնք ցույց են տալիս Հիմնադրամի կողմից հավաքագրված ընդհանուր միջոցները և տրամադրված հատուցումները: Այս հաշվիչները հասարակությանը հնարավորություն են տալիս իրական ժամանակում հետևելու իրենց նվիրաբերությունների կամ պարտադիր վճարների ստացմանը և հատուցումների տրամադրմանը:

Կայքի մեծագույն առավելություններից մեկն այն է, որ հարկ վճարողներին հնարավորություն է տալիս հետևելու իրենց պարտադիր վճարումների փոխանցմանը հարկային մարմինների կողմից հիմնադրամին: Յուրաքանչյուր հարկ վճարող և յուրաքանչյուր կազմակերպություն կարող է օգտագործել հիմնադրամի կայքը, որպեսզի վստահանա, որ Հիմնադրամը ստացել է իրենց վճարված պարտադիր վճարը: Նույն առավելությունը գործում է նվիրաբերողների համար, որոնք հեշտությամբ կարող են գտնել իրենց նվիրաբերությունները:

Թափանցիկության կարևորագույն երաշխիքներից է նաև Նվիրաբերությունների ցանկը, որտեղ հրապարակվում է Հիմնադրամի կողմից ստացված յուրաքանչյուր նվիրաբերություն:

Հրապարակվում են յուրաքանչյուր նվիրաբերության ստացման ամսաթիվը, նվիրաբերության չափը և նվիրաբերողի տվյալները: Թափանցիկության նկատառումներով հրապարակվում են նաև «անանուն» նվիրաբերությունները, մասնավորապես՝ դրանց ստացման ամսաթիվը և չափը, իսկ նվիրաբերողը նշվում է որպես «անանուն»:
Այդ ցանկը երաշխավորում է, որ հասարակությունը Նվիրաբերությունների էջի միջոցով կարող է վերահսկել հիմնադրամի կողմից ստացված յուրաքանչյուր լումա:

Կայքը նաև տրամադրում է այն զինվորների ցանկը, որոնք կամ որոնց ընտանիքները ստացել են հատուցում Հիմնադրամի կողմից: Մարդիկ հնարավորություն ունեն ճանաչելու հատուցում ստացած զինվորներին՝ նրանց կյանքի մասին տեղադրված պատմությունների, նկարների և տեսանյութերի միջոցով:

Հաշվետվողականության սկզբունքն ապահովելու համար Հիմնադրամը հրապարակում է տրամադրված հատուցումների մասին եռամսյակային հաշվետվություններ, ինչպես նաև նվիրաբերությունների աղբյուրի մասին վիճակագրություն:

Հիմնադրամը նաև հրապարակում է տարեկան հաշվետվություններ իր գործունեության մասին, ներառյալ՝ հավաքագրված գումարների չափերի, կառավարումից ստացված եկամուտների և տրամադրված հատուցումների վերաբերյալ:

Ինչպե՞ս կարող եք օգնել

ՃԱՆԱՉԵ՛Ք ՄԵԶ.

ԱՅՑԵԼԵ՛Ք ՄԵՐ ԿԱՅՔԸ WWW.1000PLUS.AM ՄԱՆՐԱՄԱՍՆ ԾԱՆՈԹԱՑԵ՛Ք ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

ԿԻՍՎԵ՛Ք ԵՎ ՏԱՐԱԾԵ՛Ք

Տարածե՛ք Հիմնադրամի գործունեության լուրը Facebook, Linkedln, Twitter և այլ սոցիալական ցանցերով

ՆՎԻՐԱԲԵՐԵ՛Ք

Այցելելով հիմնադրամի կայքը www.1000plus.am կամ կատարելով բանկային փոխանցում: Յուրաքանչյուր լուման կարևոր է:

Վճարում դոլարով (USD)

Correspondent Bank Name & Address:
JPM Chase Bank, N.A., NY

Correspondent Bank Swift Code:
CHASUS33

Correspondent Bank Account Number:
001-1-010782

Alternative Bank Name & Address:
Deutsche Bank Trust Company Americas, NY

Alternative Correspondent Bank Swift Code:
BKTRUS33

Alternative Correspondent Bank Account Number:
04437007

Recipient name:
Insurance Foundation for Servicemen

Recipient Account Number:
103008661011

Recipient's Bank:
Central Bank of the Republic of Armenia

Swift Code:
CBRAAM22

Վճարում եվրոյով (EUR)

Correspondent Bank Name & Address:
JPM Chase Bank, N.A., NY

Correspondent Bank Swift Code:
CHASUS33

Correspondent Bank Account Number:
001-1-010782

Alternative Bank Name & Address:
Deutsche Bank Trust Company Americas, NY

Alternative Correspondent Bank Swift Code:
BKTRUS33

Alternative Correspondent Bank Account Number:
04437007

Recipient name:
Insurance Foundation for Servicemen

Recipient Account Number:
103008661011

Recipient's Bank:
Central Bank of the Republic of Armenia

Swift Code:
CBRAAM22

Վճարում ռուսական ռուբլով (RUB)

Банк-корреспондент:
Межгосударственный Банк, Москва
К/с 30101810800000000362 в ОПЕРУ
Московского ГТУ Банка России БИК 044525362

Номер счета банка получателя в Межгосударственном Банке:
30111810400000000002

Альтернативный банк-корреспондент:
ПАО "ВТБ Банк"
К/с 30101810700000000187 в ОПЕРУ
Московского
ГТУ Банка России
БИК 044525187

Номер счета банка получателя в ПАО "ВТБ Банке":
30111810755550000071

Наименование получателя:
Фонд страхования военнослужащих

Номер счета получателя:
103008661581

Наименование банка получателя:
Центральный Банк Республики Армения
КИО:10637 КПП:774487001

Վճարում ՀՀ դրամով (AMD)

Ստացող՝
«Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» Հիմնադրամ

Ստացողի բանկի անվանումը՝
Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ

Ստացողի հաշվի համարը՝ 103008661003